Հ.Հ Արմավիրի մարզի Հայկավան համայնքի
ղեկավար՝ Ռ. Ղազարյանի 2019 թվականի ընթացքում կատարած աշխատանքների
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մասնակցությամբ Հ.Հ Արմավիրի մարզպետարանի Տ.Ի և Հ.Գ.Մ հարցերով վարչության Հ Գ Մ Տ Ս գործունեության համակարգման բաժնի պետ՝ Գևորգ Գևորգյանի, համայնքի ավագանու անդամների և համայնքի 61 բնակիչների.

07.02.2020թ ժամը 14:00

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Հայկավան համայնքի ղեկավարը ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, նրանից բխող օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերով, «Տեղական Ինքնակառավարման մասին », «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, համայնքի ղեկավարի աշխատակազմի, ավագանու և համայնքապետարանի ենթակայության տակ գտնվող հիմնարկների աշխատակիցների միջոցով իրականացրել է իրեն վերապահված իրավասությունների շրջանակներում իր լիազորությունները:

2019թ. ընթացքում համայնքապետարանի աշխաանքային ծրագրի հիմքում դրված են եղել համայնքի սոցիալտնտեսական զարգացման գերակա ուղղությունները:

Հիմնական նպատակը համայնքի ազգաբնակչության կենսամակարդակի բարցրացումն է , որին հասնելու համար սահմանվել են կարևորագույն խնդիրներ, որոնք էլ անհրաժեշտություն է եղել լուծելու 2019 թվականի ընթացքում: Այդ խնդիրների լուծման համար կարևորագույն պայման է հանդիսացել Արմավիրի մարզպետի, մարզպետարանի աշխատակազմի և համայնքի ավագանու ամենօրյա հոգատար վերաբերմունքը, որի արդյունքում արձանագրվել է որոշակի հաջողություններ, որոնք ըստ բնագավառների ներկայացնում եմ Ձեզ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ և ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարը աջակցում է համայնքի բնակչության գյուղատնտեսական աշխատանքների իրականացմանը, ինչպես նաև գյուղ մթերքների իրացմանը:

Հետևողական աշխատանք է տարվել ոռոգման ջրի մատակարարման համար, որի արդյունքում Հայկավան համայնքում ոռոգման ջրի հետ կապված 2019թվականի ընթացքում խնդիրներ չեն առաջացել, չնայած այն հանգամանքին որ տարին եղել է սակավաջուր այդ պատճառով գործարկվել են խորքային հորեր:

2019 թվականի ընթացքում մի քանի դաշտամիջյան ճանապարհներ և կամուրջներ վերանորոգվել են, ինչպես նաև հարթեցվել և ավազապատվել է համայնքի փողոցները:
2019 թվականի ընթացքում Հայկավան համայնքից բավականին մեծ խմբաքանակով կեռաս, սալոր և ծիրան է արտահանվել Ռուսաստանի դաշնություն և Վրաստան, որը գտնվել է համայնքապետարանի անմիջական հսկողության տակ: Հայկավան համայնքի ղեկվարի անմիջական հսկողության շնորհիվ համայնքում արտադրված խաղողի ամբողջ բերքը հանձնվել է մթերող կազմակերպություններին
Համայնքն ունի իր առանձնահատկությունները:
Հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, հողագործությամբ, այգեգործությամբ և պտղաբուծությամբ:
Արմավիրի մարզպետի և համայնքի ղեկավարի անմիջական հսկողության շնորհիվ 2019թվականի աշնանացան ցորենի համար տրամադրվել է ոռոգման ջուր, որի արդյունքում ոռոգվել է աշնանացան ցորենի արտերը:
Համայնքում առկա են նաև չմշակված հողատարածքներ, որի հիմնական պատճառներն են.
1. Հողասեփականատերերը բացակայում են համայնքից
2. Գյուղտեխնիկայի ոչ բավարար լինելը
3. Թունաքիմիկատների բարձր սակագները և անորակությունը:
Ուշադրության կենտրոնում է պահվում աճեցրած բերքի իրացման աշխատանքները:
2019թվականի ընթացքում Համայնքի ղեկավարի կողմից անմիջական հսկողություն է իրականացվել անասնաբուժական ծառայության գործում՝ պատշաճ կերպով կատարվում է բոլոր հակահամաճարակային միջոցառումները, որի շնորհիվ չի հայտնաբերվել ոչ մի տեսակի հիվանդություն:
Առևտրի՛և հասարակական սննդի,կենցաղային ծառայությունների ոլորտը վերահսկող հանձնաժողովը ժամանակին կատարում է իրեն վերապահված ստուգումները:
Համայնքում 2019 թվականի ընթացքում է գործում էր 1 առևտրի օբյեկտ, 1 գազալցակայան , 1 ծաղկի սրահ և 1 ավտոլվացման կետ:

ՀՈՂԱՇԻՆՈՒԹՅԱՆ և ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքի ղեկավարի ամենօրյա ուշադրության կենտրոնում է գտնվում և օրենքով սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում հողերի նպատակային օգտագործման վրա:
Համայնքի բնակիչների հետ ամենօրյա աշխատանքներ է տարվում գույքահարկի և հողի հարկի հավաքագրման ուղղությամբ:

Համայնքի ղեկավարի և համայնքապետարանի աշխատակիցների ջանքերի շնորհիվ հողի հարկի հավաքագրումը կազմել է 102%, իսկ 2019թվականի բյուջեի եկամտային մասը հավաքագրվել է 103%

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Կառավարության սահմանած կարգով վերահսկողություն է իրականացվում համայնքի քաղաքաշինական բնագավառում:

Քաղաքացիների դիմումների հիման վրա կատարվել են հողամասերի չափագրման աշխատանքներ:

Մշտապես կատարվում է խմելու ջրի ջրագծերի վթարների հայտնաբերման և վերացման աշխատանքներ: Ամիսը մեկ անգամ կատարվում է խմելու ջրի վարակազերծման աշխատանքներ:

Շաբաթը մեկ անգամ համայնքի տարածքում կատարվում է աղբահանության աշխատանքներ:

Վերանորոգվել է կենտրոնական ճանապարհի լուսավորության ցանցը:

Համայնքի թվով 3 փողոցներ ամբողջությամբ լուսավորվել են, որտեղ տեղադրվել են ԼԵԴ տեսակի էլեկտրախնայող լուսատուններ:

ՄՇԱԿՈՒՅԹԻ և ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ, ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ,ՍՊՈՐՏԻ և ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ

Համայնքում գործում է 1 դպրոց:

Աշակերտների թիվը 147

Ուսուցիչների թիվը 28

Համայնքապետարանի ուշադրության կենտրոնում է գտնվում համայնքի դպրոցը:

Դպրոցի բազմաթիվ շրջանավարտներ սովորում են Հանրապետության բարձրագույն և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում:

Ուսումնական տարվա ավարտին համայնքի ղեկավարի անմիջական մասնակցությամբ դպրոցում տեղի ունեցավ միջոցառում,որի ժամանակ շրջանավարտներին բաժանվեց հուշանվերներ:

Ապրիլի 24-ին Եղեռնի նահատակների հիշատակին տեղի ունեցավ միջոցառում և պսակներ դրվեցին նահատակների հուշաքարին:

Համայնքում մայիսի 9-ին մեծ շուքով նշվեց Հայրենական մեծ պատերազմի և Շուշիի ազատագրման հաղթանակի օրը:

Համայնքի ղեկավարի ուշադրության կենտրոնում է գտնվում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման խնդիրները, որի համար կազմակերպվում է տարբեր սպորտային միջոցառումներ:

2019 թվականի ընթացքում սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրվել է դրամական օգնություններ:

2019 թվականի ծմեռային և ամառային զորակոչը կազմակերպվել է համայնքապետարանի կողմից և ծառայությունից խուսափողներ չեն եղել: Համայնքապետարանի կողմից նորակոչիկների ընտանիքներին տրամադրվել է խրախուսական գումարներ:

Հայկավանի միջնակարգ դպրոցում գործում է նախակրթարան ,որտեղ հաճախում են 20 երեխաներ, որը զգալիորեն թեթեվացրել է նրանց ծնողների հոգսերը:

Ամանօրի կապակցությամբ համայնքի մինչև 9 տարեկան երեխաներին համայնքապետարանի կողմից բաժանվել է նվերներ:

Համայնքում գործող«Խնամակալության և հոգաբարձության» հանձնաժողովի և համայնքի ղեկավարի աշխատանքների շնորհիվ չկան թափառող և անօթևան երեխաներ:

Համայնքում հաշվառված են 143 կենսաթոշակառուներ:

Նպաստառու ընտանիքներ՝ 24 ընտանիք:

Համայնքի տնտեսությունների թիվը 499

Բնակչության թիվը 1677

2019թվականի ընթացքում համայնքապետարանում ստացվել է 230տարբեր բնույթի պաշտոնական գրություններ, որոնք օրինական կարգով մուտքագրվել են:

Համայնքապետարանի կողմից մարզպետարան և տարբեր կազմակերպություններ են ներկայացվել 175 պաշտոնական գրություններ:

Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ավագանին գումարել է 13 նիստ, որտեղ քննարկվել է տարբեր բնույթի հարցեր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Այս ամենով հանդերձ համայնքն ունի դեռ չլուծված շատ հիմնախնդիրներ

1. Մանկապարտեզի շենքի վերանորոգում:
2. Խմելու ջրի ներտնտեսային ցանցի վերանորոգում:
3. Ճանապարհների վերանորոգում:
4. Գյուղ տեխնիկայի ձեռք բերում
5. Եկեղեցու շենքի վերակառուցում
6. Մշակույթի տան ներքին հարդարման աշխատանքների իրականացում

Արմավիրի մարզի Հայկավան համայնքի 2019 թվականի ընթացքում բյուջեի ծախսերի կատարման հաշվետվություն

Ծախսերի անվանումը		Պլան	Կատարողական	Պլանի կատարման %
1	օրենսդիր և գործադիր	16741.3	16151.3	96.5
2	ընդհանուր բնույթի այլ	1549.0	1463.2	94.5
3	տնտեսական հարաբերություններ	1328.0	1326.5	99.9
4	շրջակա միջավայրի պաշտպանություն	2258.0	2233.8	98.9
5	բնակարանային շինարարություն կոմունալ ծառայություն	6392.0	6380.6	99.8
6	հանգիստ մշակույթ և կրոն	2550.0	2450.8	96.1
7	սոցիալական պաշտպանություն	700.0	700.0	100
	Ընդամենը	31518.3	30706.2	97.4

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ղազարյան

Առաջատար մասնագետ՝ Կ. Վարդանյան

Արմավիրի մարզի Հայկավան համայնքի 2019 թվականի ընթացքում

բյուջեի եկամուտների հաշվետվություն

Եկամուտի անվանումը		Պլան	Կատարողական	Պլանի կատարման %
1	Հողի հարկ	6621.4	6836.4	103.2
2	Գույքահարկ շենք շինություններ	237.0	214.1	90.3
3	Գույքահարկ փոխադրամիջոց	3540.0	3744.0	105.8
4	Դոտացիա	20062.7	20062.7	100.0
5	Տուրքեր	220.0	177.5	80.7
6	Հողի վարձավճար	36.9	53.0	143.9
7	Օրենքով սահ. գործ. դիմաց ստ.այլ վճարներ	535.0	244.6	45.7
8	Այլ Եկամուտներ	30.0	75.0	250.0
	Ընդամենը	31283.0	31407.4	100.4

Համայնքի ղեկավար՝ Ռ. Ղազարյան

Առաջատար մասնագետ՝ Կ. Վարդանյան